ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-5-10

Թիվ 15./118

22 12 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 6 նիստի արձանագրության որոշումները:

Առդիր «7» թերթից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-51

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» դեկտեմբերի 2015 թվականի N 19-Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12 - րդ հոդվածի 5-րդ մասով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Հաստատել Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ավագանու թիվ 6 նիստի օրակարգը՝համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ի.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ա.Սարգսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ս.Ստեփանյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Կ.Հարությունյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Մ. Մեսրոպյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Գ.Նազարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ա.Ավագյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2015 թվականի դեկտեմբերի 18
գ.Արմավիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արմավիր գյուղական
Համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 18-ի
N19-Ա որոշման

1.ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2016ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» դեկտեմբերի 2015 թվականի N 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 - րդ հոդվածի առաջին մասի 19 կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56 -րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի կողմից 2016 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի.
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա վ ա գ ա ն ու ա ն դ ա մ ն ե ր

Կողմ — Դեմ — Ձեռնպահ

Թ.Պողոսյան---------- (ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Ի.Ազիզյան---------- (ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Ա.Սարգսյան ----------(ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Ս.Ստեփանյան ----------(ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Մ.Մեսրոպյան----------(ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Կ.Հարությունյան ----------(ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Գ.Նազարյան ----------(ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Ա. Ավագյան---------- (ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Համայնքի ղեկավար՝ *Ռ.Ֆ.Մարգարյան*

2015 թվականի դեկտեմբերի 18
գ.Արմավիր

2/ ծխախոտի արտադրաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝երեք հազար դրամ:
5. Համայնքի տարածքում՝
ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ.
բ/ հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:
7. Համայնքի տարածքում՝առևտրի,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24ᵒᵒ –ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա/ առևտրի օբյեկտների համար՝քսանհինգ հազար դրամ.
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.
գ/ բաղնիքների(սաունաների) համար՝երկու հարյուր հազար դրամ.
դ/ խաղատների կազմակերպման համար՝հինգ հարյուր հազար դրամ.
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝երկու հարյուր հիսուն հազար դրամ.
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝մեկ հարյուր հազար դրամ.
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ զրո դրամ:
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ տասը հազար դրամ:
10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
11. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել հինգ հազար դրամ:

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՍԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ N 21-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան՝նորշենքերի,շինությունների (ներառյալ ոչ հիմնական)շինարարության (տեղադրման)թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար՝
ա/ մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝երեք հազար դրամ.
բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝երեք հազար դրամ.
բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝հինգ հազար դրամ.
բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝յոթ հազար դրամ.
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝հինգ հարյուր դրամ.
դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար երկու հազար հինգ հարյուր դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերեկանգնման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվոոությունն չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախածով՝
ա/ չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.
բ/ բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,բացի սույ ն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.
գ/ նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար հինգ հարյուր դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝երեք հազար դրամ:

2/ ծխախոտի արտադրաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝երեք հազար դրամ:
5. Համայնքի տարածքում՝
ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ.
բ/ հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:
7. Համայնքի տարածքում՝առևտրի,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24ᵒᵒ-ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա/ առևտրի օբյեկտների համար՝քսանհինգ հազար դրամ.
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.
գ/ բաղնիքների(սաունաների) համար՝երկու հարյուր հազար դրամ.
դ/ խաղատների կազմակերպման համար՝հինգ հարյուր հազար դրամ.
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝երկու հարյուր հիսուն հազար դրամ.
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝մեկ հարյուր հազար դրամ.
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ զրո դրամ:
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ տասը հազար դրամ:
10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
11. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել հինգ հազար դրամ: